

կ'երթայ մինչեւ քէօթահեա կոլտի կողմէն, եւ
Երուսաղէմի պատրիարքը, որ 1736 Մայիս 6ին
ելած էր Երուսաղէմէն, շքեղ ու խանդավառ ըն-
դունելութիւններով եւ խաղաղութեամբ կը հասնի
“ի կոստանդնուպոլիս, յենկի Ղափու կոչեցեալ
նաւահանգիստն ի Յուլիոսի առէրէս, ի վէջ ժամո-
սորէն” (անդ, էջ 125—126)։ Հմմտ. Ժամագրկ.
Պտմ. Երուսաղէմի, Ա. հատոր 48—49։

Իսկ իր Պոլիս գալուն “սոյճ պարճառն այս”
է. զի աստուծով զկնի զանթիւ պարտս Սրբոյ
Աթոռոյն հատուցանելոյ, եւ զբազում տեղիս
շինելոյ եւ նորոգելոյ զսուրբ տեղիսն եւ զԳահն
մեծ, խորհեցաք զհեռէիշխան եւ զամենայն անէլի-
Սրբոյ Աթոռոյն նորոգել տալոյ, որ եղեւն իսկ
Աստուծով։ Ի թուին ՌՃՅԸ (= 1739) Դեկ-
տեմ. 23. մեր սուրբ Աթոռոց հեռէիշխան նորո-
գեցան եւ մեծագոր Աբքայն իւր ձեռագրաւն
կնքեաց միջնորդութեամբ Փռանկարզի բարեպաշտ
Էլչիպէկին” (անդ էջ 185 եւ 186)։

Այս ուղեւորութիւնը, յիրաւի շատ օգտա-
կար եղաւ. ոչ միայն Հայոց իրաւունքները վերա-
հաստատուեցան Ս. Տեղեաց մէջ, այլ նաեւ
Շղթայակիրն նոր ձեռնարկութիւններ ըրաւ Պոլ-
սոյ մէջ։

1738 Օգոստոս 22. Գշ. Իւսկիւտարի մէջ
Երուսաղէմի վանք ըսուած հաստատութիւնն ըն-
դարձակեց եւ մատուռով մին ալ օժտեց։ Վանքի
այգիին յարակից բաժինները գնեց, ամռան
զբօսանքի համար տեղեր զարդարեց եւ Ձեբեղեան
Ս. Յակոբայ անունով մատուռ մը շինեց հոն. գի-
շերը գաղտուկ օժեց եւ առաջին պատարագը ինքն
մատոյց։

Շղթայակիրն պատմութիւնը նոյնութեամբ
կը գնե՞ք հոս. “Եւ ի վերայ հնոյ երեք բաժնին
խաղողոյ այգեաց, զոր ունէաք մերձ յարակից
նորա երեք բաժին այլ մեծաւ ջանիւք գնեցաք եւ